ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 42. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

1

XIV դ. կեսին թուրք-օսմանները ներխուժեցին Բուլղարիա: Գրեթե յուրաքանչյուր բնակավայր նրանք ստիպված էին գրավել կռվով: Բուլղար գյուղացիները ապաստանում էին անտառներում ու լեռներում, դարանակալում և հարձակվում էին թուրքերի վրա: Սակայն բուլղար ավատատերերը չմիավորվեցին թշնամու դեմ պայքարում, և XIV դ. վերջին Բուլղարիան ընկավ օսման-թուրքերի տիրապետության տակ:

Թուրք-օսմանները երկարատև պատերազմ վարեցին Սերբիան նվաճելու համար: 1389 թ. օսմանյան բանակը ներխուժեց Սերբիա: Արյունալի ճակատամարտը տեղի ունեցավ Կոսովոյի դաշտում: Սերբ իշխանների միջև տեղի ունեցող գժտությունների հետևանքով ոչ բոլոր իշխանները իրենց ջոկատները բերեցին կռվի դաշտ, իսկ որոշ իշխաններ իրենց ջոկատներով դիտորդի դեր ստանձնեցին: Ճակատամարտի սկիզբը շատ կատաղի էր: Սերբ հայրենասեր Միլոշ Օբիլիչը, մահվանն ընդառաջ գնալով, թափանցեց թուրքական ճամբար ու սրախողխող արեց սուլթանին: Թուրքերի բանակում խառնաշփոթություն առաջացավ: Թվում էր, թե սերբերը մոտ են հաղթանակին, բայց սուլթանի որդին մարտի նետեց ընտիր զորամասեր: Չնայած սերբերի հերոսական դիմադրությանը, թուրքերը, թվական գերազանցության շնորհիվ, հաղթանակ տարան: Մի քանի տասնամյակ անց թուրք-օսմանները վերջնականապես հպատակեցրին Սերբիան:

Ունենալով իր ժամանակի ամենահզոր հրետանին, թուրքերը օր ու գիշեր գնդակոծում էին քաղաքի պարիսպները, բայց պաշտպանները կարողանում էին հետ մղել նրանց գրոհները: Ձայրացած սուլթանը հրամայեց թուրքական նավերը մտցնել Կոստանդնուպոլսի ***Ոսկեղջյուր ծովածոցի*** նավահանգիստը, որտեղ քաղաքի պարիսպները ավելի թույլ էին և հեշտ էր գրոհել: Բայց թուրքական նավերը չէին կարողանում նավահանգստին մոտենալ, քանի որ ծովածոցի մուտքն արգելափակված էր հաստ շղթայով, ինչը խանգարում էր նավերին նավահանգիստ մտնել: Թուրքերին հաջողվեց գիշերը, իրենց նավերը, նախապես գետինը տախտակապատելով և ճարպով պատելով, ցամաքով քաշելով մտցնել Ոսկեղջյուր: Բոլոր կողմերից շրջապատելով քաղաքը՝ թուրքական զորքերը անցան վճռական գրոհի: Արյունահեղ գոտեմարտում զոհվեց բյուզանդական վերջին կայսրը:

Կոստանդնուպոլսի պաշարումը 1453 թ.